ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
Լոռու մարզային հանձնաժողովի նիստի

18.07.2025թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ, հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչներ, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի ընթացիկ աշխատանքների մասին:
/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/
2. «Համընդհանուր ներառում - 2. բյուջեից քաղաքականություն» ծրագրի մեկնարկի և առաջիկայում իրականացվող գործողությունների ներկայացում:
/Զեկ.՝ «Լուսաստղ» ՀԿ-ի փոխնախագահ Արփինե Սերոբյան
3. Հայ սկաուտական համահայկական խաղերին «Լուսաստղ» ՀԿ-ի անդամների մասնակցության մասին:
/Զեկ.՝ «Լուսաստղ» ՀԿ-ի նախագահ, Հանձնաժողովի անդամ Անի Գաբրիելյան/
4. «Ադա» կենտրոնի երկամյա գործունեության և ծառայությունների ներկայացում:
/Զեկ.՝ «Լուսաստղ» ՀԿ-ի «Ադա» կենտրոնի հոգեբան Աստղիկ Թարխանյան/
5. «Շարժական սոցիալական կենտրոններ Լոռիում» ծրագրի ամփոփում և արդյունքների ներկայացում:
/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ Ծրագրի ղեկավար Աստղիկ Ասրյան-Ղալայան/
6. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների ներկայացումը սոցիալական հոլովակների միջոցով (ցուցադրություն):
/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամ Անուշ Ասլանյան/
7. Շոուդաուն թենիսը որպես հաշմանդամություն ունեցող անձանց ներառման միջոց:
/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ անդամ Ռուբիկ Փարսադանյան/
8. «Լիարժեք կյանք» ներառական ՀԿ-ի կողմից կազմակերպվող ամենամյա ամառային ներառական ճամբարի նախապատրաստական և անցկացման հարցերի մասին:
/Զեկ.՝ «Լիարժեք կյանք» ներառական ՀԿ-ի Ստեփանավանի ներկայացուցիչ Գոհար Գևորգյան/
9. «Փեթակ» ՀԿ-ի կողմից կատարած աշխատանքների և ծրագրերի մասին:
/Զեկ.՝ «Փեթակ» ՀԿ-ի նախագահ, Հանձնաժողովի անդամ Լուսինե Ավետիսյան/
10. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

Հանձնաժողովի նիստի նյութերը նախապատրաստել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կայք-էջում տեղադրելու համար:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի անդամ Աննա Գասպարյանին՝ ապահովել Հանձնաժողովի նիստի հրապարակայնությունը:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ